

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

18. հոկտեմբեր 2018, № 4/1

2018-2019 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՇՊՀ-Ի ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ ԵՎ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

2018թ.-ի հոկտեմբերի 10-ի թիվ 03 ռեկտորատի առաջարկների, որոշումների, ինչպես նաև գիտական խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված կարծիքների ու դիտարկումների հիման վրա ՇՊՀ-ի գիտական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Գնահատման բաղադրիչներից ընթացիկ ակտիվությունը հաշվարկել գնահատված ընթացիկ ստուգումների (գրավոր, բանավոր՝ միտված դասընթացի վերջնարդյունքների), **սեմինարների, գործնական և լաբորատոր աշխատանքների** միջին թվաբանականով: Վերջիններս գրառել մատյանում և դրանց թիվը որոշել վերջնարդյունքների, **սեմինարների, գործնական և լաբորատոր աշխատանքների** քանակով:
2. Ընթացիկ ստուգման վերահանձնում չի թույլատրվում:
Ընթացիկ ստուգումից հարգելի պատճառով բացակայության դեպքում մինչև հաջորդ ստուգումը թույլատրվում է հանձնելու նախորդը:
3. Դասընթացը, որի լսարանային ժամաքանակը 64 և ավելի է, համարել միջանկյալ ստուգումներով ավարտվող **4** գործոնով դասընթաց և «ստուգում 1», «ստուգում 2» տերմինները փոխարինել «միջանկյալ ստուգում 1», «միջանկյալ ստուգում 2» տերմիններով: Այս դեպքում բազմագործոնային գնահատականը ձևավորվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\text{բազմագործոնային գնահատակ.} = \langle \text{ընթ. ակտիվ. գն} \rangle * 0,3 + \langle \text{հաճախումներ} \rangle * 0,1 + \\ + \langle \text{միջ. ստուգ. 1 գն.} \rangle * 0,3 + \langle \text{միջ. ստուգ. 2 գն.} \rangle * 0,3$$

Դասընթացը, որի լսարանային ժամաքանակը 64-ից պակաս է, համարել ամփոփիչ ստուգմամբ ավարտվող **3** գործոնով դասընթաց: Այս դեպքում բազմագործոնային գնահատականը ձևավորվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\text{բազմագործ. գն.} = \langle \text{ընթացիկ ակտիվ. գն} \rangle * 0,3 + \langle \text{հաճախումներ} \rangle * 0,1 + \\ \langle \text{ամփոփիչ ստուգ. գն.} \rangle * 0,6$$

4. Եթե ուսանողի արդյունարար գնահատականը 40 և ավելի է, ապա ուսանողը ստանում է համապատասխան կրեդիտը՝ առանց վերահանձման հնարավորության, իսկ եթե այն 40-ից պակաս է, ապա ուսանողը վերահանձնում է կամ ամփոփիչ

ստուգումը (3 գործոնի դեպքում) կամ համապատասխան միջանկյալ ստուգում /ներ/ը (4 գործոնի դեպքում):

5. Բազմագործոնային գնահատականը հաշվելիս վերահանձնված ստուգման միավորը փոխարինում է համապատասխան միավորին:

*Վերոգրյալ փոփոխությունները վերաբերում են միայն բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների գնահատման բաղադրիչներին ու կշիռներին, իսկ բակալավրի հեռակա և մագիստրոսական համակարգերում սովորող ուսանողների գնահատման բաղադրիչներն ու կշիռները հաշվարկվում են նախորդ տարի կիրառված սկզբունքով (հիմք՝ 25.08.2017թ.-ի գիտական խորհրդի «ՇՊՀ-Ի ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» թիվ 19/1 որոշումը):

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌԵԿՏՈՐԻ ԺՊ՝

ԵՐ.ՍԵՐՈՒԲՅԱՆ